ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 հունիսի 2023 թվականի N 840-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 65-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունվարի 19-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԼԵՆՏԵՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 65-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1) 9-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10-11-րդ կետերով՝

10.	5510 90 000 0	Մանվածք արհեստա-կան մանրաթելե-րից (բացի կարի թելերից)՝ մանրածախ վաճառքի համար չբաժնե-ծրարված - այլ մանվածք	Մանվածք գուլպայի արտադրու-թյան համար	կգ	300 000	Չինաստան Հնդկաստան Թուրքիա	Չինաստան Հնդկաստան Թուրքիա	432 000 000	
11.	5509 42 000 0	Մանվածք սինթետիկ մանրաթելե-րից (բացի կարի թելերից)՝ մանրածախ վաճառքի համար չբաժնե-ծրարված. - նայլոնից կամ այլ պոլիամիդ-ներից մանրաթե-լերի 85% զանգվա-ծային բաժին կամ ավելի պարունա-կությամբ. - բազմաղոր (ոլորուն) կամ միաղոր մանվածք - այլ մանվածք՝ պոլիեթե-րային մանրաթե-լերից	Մանվածք գուլպայի և սվիտերի արտադրու-թյան համար	կգ	60 000	Չինաստան Հնդկաստան Թուրքիա	Չինաստան Հնդկաստան Թուրքիա	108 000 000	

2) հավելվածի «Ընդամենը» պարբերության մեջ «1 899 900 000» թիվը փոխարինել «2 439 900 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

01.06.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ